[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
15	Հոկտեմբեր	2019 թ.		Ա	1760833072
[4] Մատակարարման ամսաթիվ					
15	Հոկտեմբեր	2019 թ.			

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ռում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակությունը)	Միավորի գինը	Ձեղ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	68155119 դատահոգեբանական փորձաքննություն/նույն		1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700334
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը, մասնաբաժանումը, հասցեն, ազգանունը

պաշտոնը, մասնաբաժանումը, հասցեն, ազգանունը

15/10/2019 14:33:11

ՈՐՈՇՈՒՄ

դատահոգեբանական ամբուլատոր
փորձաքննություն նշանակելու մասին

23.04.2019թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ Ռ.Վ.Դավթյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 68155119 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2019 թվականի մարտի 3-ին՝ ժամը 02:02-ին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ 077752085 բջջային հեռախոսահամարից իրենց է զանգահարել Գյումրի քաղաքի Մազմանյան փողոց 344-րդ տանը բնակվող անհայտ անձը և հայտնել, որ նախկին ամուսինը խմած եկել է իր տուն:
Պարզվել է, որ ահազանգը կատարել է Գյումրի քաղաքի Մազմանյան փողոց 344-րդ տան բնակչուհի՝ Նազիկ Թորոսի Մխիթարյանը, ով նույն օրը ժամը՝ 02:50-ին ահազանգի կապակցությամբ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2019 թվականի մարտի 3-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, նախկին ամուսինը՝ Կարեն Սլավիկի Տոնոյանն իրենց դստեր ծնունդը շնորհավորելու նպատակով եկել է իր հայրական տուն, սակայն տեսակցելուց հետո սկսել է վիճաբանել իր հետ, որի ժամանակ իր հասցեին հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանքներ և սպառնացել է, որ կսպանի:
Նյութերի նախապատրաստման ընթացքում Նազիկ Թորոսի Մխիթարյանը բացատրություն է տվել այն մասին, որ շուրջ երկու տարի է, ինչ ամուսնալուծվել է Կարեն Սլավիկի Տոնոյանից և երկու անչափահաս երեխաների հետ միասին տեղափոխվել է բնակվելու իր հայրական՝ Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի 344 տուն: Սույն թվականի մարտի 3-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, երբ բոլորը քնած են եղել, տան մուտքի դուռը թակել են: Ինքը միայնակ մոտեցել է մուտքի դռանը և հարցրել է, թե ով է: Դռան հետևից պատասխանել են, որ Կարենն է: Իր հարցին, թե ինչի համար է ուշ ժամին եկել, նախկին ամուսինը պատասխանել է, որ եկել է դստեր՝ Լյուդմիլա Կարենի Տոնոյանի ծննդյան օրվա կապակցությամբ շնորհավորելու: Ինքը Կ.Տոնոյանին հայտնել է, որ երեխաները քնած են և առաջարկել է առավոտյան գալ, սակայն նախկին ամուսինը պահանջել է, որ երեխաներին արթնացնի, այլապես մինչև երեխաներին չտեսնի, չի գնա: Ինքը, երբ գնացել է երեխաներին արթնացնելու, տեսել է, որ նրանք արդեն արթուն են և թույլ է տվել, որպեսզի երեխաները տանից դուրս գան ու բակում շփվեն իրենց հոր հետ: Դրսում մի քանի րոպե զրուցելուց հետո Կ. Տոնոյանն առանց իր թույլտվության երեխաների հետ տուն է մտել և շարունակել է նրանց հետ զրուցել խոհանոցում:

Ինքը Կ.Տոնոյանին ասել է, որ գնա, սակայն ի պատասխան Կ.Տոնոյանը սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել իր ծնողների և իր հասցեներին, ինչպես նաև սպառնացել է, որ իրեն և ծնողներին կսպանի: Ն. Մխիթարյանը նշել է, որ սպառնալիքներն ինքն իրական է ընդունել, ինչի պատճառով անմիջապես գնացել է հյուրասենյակ և իր անձնական օգտագործման բջջային հեռախոսահամարով զանգահարել է ոստիկանություն: Ն. Մխիթարյանը նշել է, որ նախկին ամուսինն իրեն կամ տան անդամներից որևէ մեկին չի հարվածել, չի քաշքշել, տան գույքը չի վնասել, ոստիկանություն ահազանգելուց հետո միայն մեկ անգամ իրեն հրել է և թքել դեմքին: Ն. Մխիթարյանը նշել է, որ կատարվածից հետո ինքը և մայրն ամբողջ գիշեր չեն քնել, քանի որ գտնվել են հոգեկան ուժեղ տառապանքի մեջ և մտավախություն են ունեցել, որ Կ.Տոնոյանը կարող է վերադառնալ և վնասել իրենց: Հաջորդ օրը տանից դուրս գալիս ժամանակ առ ժամանակ շրջվել է, մտավախությամբ, որ Կ.Տոնոյանը հնարավոր է իրեն հետապնդի և վնասի, տան մուտքի դուռն ամեն անգամ թակելիս ինքը և մայրը հոգեկան ապրումներով և վախով են մոտենում դռանը և այն բացում՝ կարծելով, որ Կ.Տոնոյանը կարող է վերադառնալ:

Ըստ էության նույնաբովանդակ բացատրություն է տվել նաև Նազիկ Մխիթարյանի մայրը, նույն հասցեի բնակչուհի՝ Զոյա Գարեգինի Սարգսյանը՝ ավելացնելով, որ 03.03.2019 թվականին իրենց տանը տեղի ունեցած միջադեպից հետո ինքը և դուստրը գտնվում են հոգեկան ուժեղ տառապանքի մեջ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Նազիկ Թորոսի Մխիթարյանը հրաժարվել է, որպեսզի իր անչափահաս երեխաները՝ Սլավիկ և Լյուդմիլա Կարենի Տոնոյանները միջադեպի վերաբերյալ բացատրություն ներկայացնեն՝ պատճառաբանելով, որ 03.03.2019 թվականին իրենց տանը տեղի ունեցած միջադեպից հետո երեխաները դարձել են դյուրագրգիռ, սթրես են տարել,հոգեկան ապրումներ են ունեցել, և ինքը չի ցանկանում, որ երեխաները կատարվածի կապակցությամբ բացատրություն ներկայացնեն, քանի որ հակառակ դեպքում նրանց հոգեկան վիճակն ավելի կվատանա:

Կարեն Սլավիկի Տոնոյանը բացատրություն է տվել այն մասին, որ 2019 թվականի մարտի 3-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, ոգելից խմիչք օգտագործած վիճակում գնացել է նախկին կնոջ՝ Նազիկ Թորոսի Մխիթարյանի տուն՝ դստերը տեսակցելու և նրան ծննդյան օրվա կապակցությամբ շնորհավորելու նպատակով: Նրանց տանը դստեր և որդու հետ զրուցելիս նախկին կինը պահանջել է, որ ինքը դուրս գա տանից, ինչից հետո ինքը սեռական բնույթի հայհոյանքներ է կատարել նախկին կնոջ և նրա ծնողների հասցեներին, ինչպես նաև թքելէ նախկին կնոջ դեմքին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, սակայն Նազիկ Թորոսի Մխիթարյանը հրաժարվել է ներկայանալ դատաբժշկական փորձաքննության՝ պատճառաբանելով, որ միջադեպի ժամանակ Կարեն Սլավիկի Տոնոյանն իրեն որևէ մարմնական վնասվածք չի պատճառել:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ նախապատրաստված նյութերում առերևույթ առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ 13.03.2019 թվականին ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնում հարուցվել է թիվ 68155119 քրեական գործը և ուղարկվել ՇՄ քննչական վարչություն նախաքննություն կատարելու:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Նազիկ Մխիթարյանը և Կարեն Տոնոյանն ամուսնացել են 2005 թվականի ապրիլ ամսին, համատեղ կյանքի ընթացքում ունեցել են երկու երեխաներ՝ Լյուդմիլա և Սլավիկ Տոնոյաններին: Համատեղ կյանքի ընթացքում եղեն են վեճեր, վիճաբանություններ, որի ընթացքում Նազիկ Մխիթարյանն անընդհատ բռնության է ենթարկվել ամուսնու կողմից: 2013 թվականին Ն.Մխիթարյանը տանից հեռացել է երեխաների հետ և մշտական բնակություն է հաստատել հայրական տանը: Սակայն այնտեղ ևս ամուսինը՝ Կարեն Տոնոյանը, հանգիստ չի թողել նրանց, բազմիցս գնացել է նրա հայրական տուն և սպառնալիքներ ու հայհոյանքներ է հնչեցրել ուղղված Ն.Մխիթարյանին և նրա ծնողներին: Սպառնալիքներն իրագործելու համար կատարել է գործողություններ, ծեծի ենթարկելով Ն.Մխիթարյանի ծնողներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, կոտրել է նրանց տան պատուհանները, ստեղծել սարսափի և վախի մթնոլորտ:2019 թվականի մարտի 03-ին Կարեն Տոնոյանի կողմից նախկին կնոջ՝ Նազիկ Մխիթարյանի հայրական տանը ստեղծվել է կրկին նույն իրավիճակը, ինչի հետևանքով վերջինս թքել է կնոջ դեմքին՝ պատճառելով հոգեկան ուժեղ տառապանք:

Նախաքննությամբ պարզվել է նաև, որ Լյուդմիլա և Սլավիկ Տոնոյանները ևս հոր ներկայությունից ընկնում են սթրեսների մեջ, միմյանց հետ գրեթե չեն հաղորդակցվում, դարձել են ագրեսիվ և անհանդուրժող միմյանց հանդեպ, ինչպես նաև վախենալով են դպրոց հաճախում, ամեն վայրկյան մտածելով, որ հայրն իրենց տեսնելու դեպքում կարող է վնասել կամ բռնի գործողությունների դիմել, քանի որ եղել է դեպք երբ հայրն իրենց էլ է ծեծի և բռնության ենթարկել

Նկատի ունենալով, որ Նազիկ Մխիթարյանի, Լյուդմիլա և Սլավիկ Տոնոյանների հոգեվիճակը պարզելու համար պահանջվում են դատահոգեբանական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամին:

2. Հետազոտման նպատակով փորձաքննության ներկայացնել քրեական գործի նյութերը:

3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ ինչ հոգեբանական վիճակում են գտնվել Նազիկ Մխիթարյանը, Լուդմիլա և Սլավիկ Տոնոյանները դեպքին նախորդող և հաջորդող ժամանակահատվածում,

բ/ Նազիկ Մխիթարյանի և երեխաների մոտ առաջացել է արդյոք հուզական վիճակ, տրամադրության անկում, դեպրեսիա,

գ/ այդ ամենը պատճառական կապի մեջ գտնվում է արդյոք Կարեն Տոնոյանի գործողությունների հետ, թե ոչ:

Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, խնդրվում է պատասխանել նաև դրանց:

քննիչ՝ **Ռ.Վ.Դավթյան**